ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԳԻՆԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Արգինա Հ.Շիրազի փ.17
26 .11. 2020թ N 109

Հ Հ Արմավիրի մարզպետ
Պ -ն Հ. Մաթևոսյանին

Հարգելի Պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արմավիրի մարզի Արգինա համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 6 հերթական նիստի որոշումները:

Առդիր 8 թերթ

Արգինա համայնքի ղեկավար Ռ. Արոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԻՆԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

24.11.2020թ. Ն 21 - Ա

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՐԳԻՆԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1 Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգինա համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 6 հերթական նիստը համաձայն հավելված 1-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ	----------	----------	----------
Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՍԼԱՆՅԱՆ	_____	_____	_____
Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	_____	_____	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԱՐՈՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԻՆԱ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 Թ -Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 21-Ա
ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԻՆԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1 .ԱՎԱԳԱՆՈՒ 2020 Թ-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ռ. ԱՐՈՅԱՆ

2 ԱՐԳԻՆԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ;
ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ռ.ԱՐՈՅԱՆ

3. ՄԻԱՆՎԱԳ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ռ.ԱՐՈՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԻՆԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

24.11. 2020թ. N 22 -Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԻՆԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 02-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, ,,ՀՀ Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ,, Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով, Արդարադատության նախարարության 10.11.2020 թ-ի թիվ 06 / 27.1/25158 գրության փորձագիտական եզրակացությամբ և համայնքի ղեկավարի առաջարկությամբ՝

ԱՐԳԻՆԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգինա համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի ,,Արգինա համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին ,, թիվ 02-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

Ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունը՝

- 04.05. 01 հատվածի 4269 հոդվածը ավելացնել 175000 դրամով:
- 04.05. 01 հատվածի 4251 հոդվածը ավելացնել 188000 դրամով
- 10.07. 01 հատվածի 4729 հոդվածը ավելացնել 400000 դրամով
- 09.01. 01 հատվածի 4637 հոդվածը պակասեցնել 763000 դրամով

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ ---------- ---------- ----------

Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ---------- ---------- ----------

Ռ. ԱՍԼԱՆՅԱՆ _____ _____ _____

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____ _____ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԻՆԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

24.11. 2020թ. N 23 -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՄԻԱՆՎԱԳ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՐԳԻՆԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համայնքի վարչական բյուջեի 10.07.01 հատվածի 4729 հոդվածից 110.0 հազար դրամ 09.10.2020 թվականին հատկացվել է Արգինա համայնքի բնակիչ Արցախյան պատերազմում զոհված Անդրանիկ Գրիգորի Գրիգորյանի հուղարկավորության արարողության կազմակերպման կապակցությամբ:
2 .Համայնքի վարչական բյուջեի 10.07.01 հատվածի 4729 հոդվածից 110.0 հազար դրամ հատկացնել Արգինա համայնքի բնակիչ Արցախյան պատերազմում զոհված Գնել Մինասի Ֆիդանյանի հուղարկավորության արարողության կազմակերպման կապակցությամբ:
3. Համայնքի վարչական բյուջեի 10.07.01 հատվածի 4729 հոդվածից 110.0 հազար դրամ հատկացնել Արգինա համայնքի բնակիչ Արցախյան պատերազմում զոհված Եղիշե Շավարշի Մարգարյանի հուղարկավորության արարողության կազմակերպման կապակցությամբ:
4. Համայնքի վարչական բյուջեի 10.07.01 հատվածի 4729 հոդվածից 60.0 հազար դրամ հատկացնել Արցախի Հանրապետությունից արտագաղթած Արտյոմ Միսակի Սաֆարյանին իր անձնական գույքը Արցախի Հանրապետությունից Արգինա գյուղ տեղափոխելու կապակցությամբ:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ	----------	----------	----------
Հ.ԹԱԴԵՈՍՅԱՆ	----------	----------	----------
Ռ.ԱՍԼԱՆՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015

Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

N 06/27.1/25158

< 10 11 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԻՆԱ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՌՈՍՏԱՄ ԱՐՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արոյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ Մ/49056-2020 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգինա համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի թիվ 02-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

11/9/2020

X

Suren Galstyan

Signed by: GALSTYAN SUREN 1111911555

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Լյուդվիգ Մելքոնյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 18

Արդարադատության
նախարարություն

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգինա համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի թիվ 02-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. Նախագծի անվանման մեջ «ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ԱՎԱԳԱՆԻ» բառով:

2. Նախագծի անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, մասնավորապես՝ նախագծի անվանման մեջ նշել «ՈՐՈՇՈՒՄ» բառը, հիշյալ իրավական ակտի բնույթը:

3. Հարկ ենք համարում ընդգծել նաև, որ եթե ներկայացված նախագծով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյալ նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած՝ արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ համայնքի բյուջեում, եթե տվյալ փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող նախագծի հավելվածների տեսքով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, մասնավորապես՝ Նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին): Այդ առումով նախագծի 1-ին կետի 1-ի դրույթներն անհրաժեշտ է հանել և նախատեսել հավելվածներում:

4. Նախագիծն անհրաժեշտ է լրացնել 2-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»: Սույն դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

5. Նախագծի հիմնավորման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտի նախագիծը հիմնավորման հետ մեկտեղ փորձաքննության են ուղարկում համապատասխան ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը կամ Կառավարության անդամը, ինչպես նաև Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինները:*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:*

Վերոգրյալ կարգավորումների համադրված և բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ պարտադիր պետք է շարադրվեն կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը, կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը, մինչդեռ տվյալ դեպքում նախագծի հիմնավորումը թերի և չի արտացոլում նախագծի ընդունման նպատակը և իրավաչափությունը:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

11/7/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ